

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ՈՒ

«Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ՄԱԶԾ-ԳԷՖ/00059937 ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման գործընթացին աջակցող **միջգերատեսչական մշտական գործող աշխատանքային խմբի**

*ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ Ա. Հակոբյանի գրասենյակում
2010թ. նոյեմբերի 12-ին կայացած նիստի*

Մասնակցում էին՝

Խմբի անդամներ՝

Ա.Հակոբյանը, Ս.Սրապյանը, Օ.Կարապետյանը, Մ.Ծառուկյանը, Ա.Եզանյանը, Գ.Մինասյանը, Ե.Վարդանյանը, Հ.Եսայանը, Հ.Աբրահամյանը, Ա.Կարապետյանը:

Հրավիրվածներ՝

Դ.Հարությունյանը, ՄԱԶԾ/Հայաստան գրասենյակի կլիմայի փոփոխության ծրագրերի կառավարիչ

Վ.Զալալյանը, Ծրագրի առաջադրանքի ղեկավար

Ա.Վարդանյանը, «Շինսերտիֆիկատ» ՄՊԸ-ի տնօրեն

Գ.Թադևոսյանը, ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի բնակարանային ապահովման, բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ քաղաքականության վարչության բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ բաժնի գլխավոր մասնագետ

Մ. Խաչիկյան, ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի բնակարանային ապահովման, բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ քաղաքականության վարչության բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ բաժնի առաջատար մասնագետ

Նիստի օրակարգը՝

ՄԱԶԾ-ԳԷՖ-00059937 «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ծրագրի (ներառյալ առաջիկա խնդիրների) համառոտ ներկայացում:

Ելույթներ ունեցան՝

Ա.Հակոբյանը ողջունեց մասնակիցներին և շնորհակալության հայտնեց մասնակցության համար: Նա ներկայացրեց ՀՀ քաղաքաշինության նախարարի 2010թ. նոյեմբերի 11-ի թիվ 125 հրամանը, մասնավորապես հաստատված միջգերատեսչական մշտական գործող աշխատանքային խմբի կանոնակարգը, ինչպես նաև խնդիրները: Այնուհետև խոսքը փոխանցեց Վ.Զալալյանին:

Վ.Զալալյանը համառոտ ներկայացրեց «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ծրագիրը, որի նպատակն է հակադարձել առկա միտումները և նվազեցնել էլեկտրական և ջերմային էներգիայի սպառումը, միաժամանակ նվազեցնելով դրանց հետ կապված ջերմոցային գազերի արտանետման ծավալները Հայաստանի նորակառույց և վերակառուցվող, առաջին հերթին՝ բնակելի շենքերից: Ծրագիրը ունի չորս բաղադրիչ, որոնք են՝

1. Էներգաարդյունավետության սկզբունքների վրա հիմնված շինարարական նորմերի ու կանոնների և ստանդարտների մշակում և կիրարկում:

2. Որակի հսկողություն, էներգաարդյունավետ նյութերի և սարքավորումների փորձարկում և հավաստագրում.

3. Շենքերի ինտեգրված նախագծման վերաբերյալ իրազեկում, ուսուցում և կրթական ծրագրերի կազմակերպում,

4. Շենքերի ինտեգրված նախագծերի փորձնական/առաջնեկային իրագործում:

Կայացավ մտքերի փոխանակում աշխատանքային խմբի աշխատանքների կազմակերպման և առանձին հարցերի վերաբերյալ:

Օ. Կարապետյանը նշեց, որ առայժմ միայն երկաթբետոնե կոնստրուկցիաներն են սերտիֆիկացվում, մնացած շինարարական նյութերի սերտիֆիկացման համար անհրաժեշտ է օրենսդրական դաշտի փոփոխություն և սերտիֆիկացման գործընթացը գտնվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության իրավասությունների տիրույթում:

Մ. Օստուկյանը առաջարկեց համապատասխան նորմատիվների ընդունմամբ ներդնել արևային էներգիայով աշխատող համակարգերը (օրինակ՝ արևային ջրատաքացուցիչներ) պիլոտային շենքերում:

Գ. Մինասյանը նշեց, որ Հայաստանը լինելով արևային երկիր անհրաժեշտ է կիրառել արևային էներգիայով աշխատող համակարգեր:

Դ. Հարությունյանը առաջարկեց քննարկել նորմատիվային դաշտի մշակման և ներդրման փուլային մոտեցումը:

Հ. Եսայանը նշեց, որ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում հասարակական շենքերի, հատկապես դպրոցների նորոգման աշխատանքներում կիրառվել են պատող կոնստրուկցիաների և ծածկերի պեռլիտով ջերմամեկուսացման տեխնոլոգիաներ, որի շնորհիվ ակնկալվում է խնայել 35-40% էներգիա: Նա առաջարկեց նորմատիվային փաստաթղթերի մշակման շրջանակներում կիրառել այդ փորձը:

Ա. Վարդանյանը նշեց, որ ներկայումս “Շինսերտիֆիկատ” ՍՊԸ-ի կողմից պատրաստվում է վերլուծություն շինարարական նորմերի և ստանդարտների վերաբերյալ: Դիտարկվում է գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերը, ինչպես նաև Հայաստանի կողմից վավերացվածները: Մասնավորապես դեռևս 2004 թվականին Հայաստանը ստորագրել է ՄՄՆ “Շենքերի ջերմային պաշտպանություն” շինարարական նորմերը, սակայն որը մինչ այժմ չի դրվել գործողության մեջ:

Նշեց նաև, որ ներկայումս մշակվում է նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցանկ, որոնք պետք է առաջնահերթության կարգով ընտրվեն շենքերի էներգախնայողության պահանջների ընդունման նպատակով:

Օ. Կարապետյանը առաջարկեց ”հանրային շենքեր” տերմինը փոխարինել “հասարակական շենքեր” շինարարական տերմինով, հաշվի առնելով, որ այն ընդունված է շինարարական նորմերով:

Մ. Սրայսյանը առաջարկեց հաջորդ կայանալիք նիստին ներկայացնել առաջարկություններ աշխատանքային խմբի կանոնակարգի վերաբերյալ:

Դ. Հարությունյանը նշեց, որ ս.թ. նոյեմբերի 17-ին կայանալիք ծրագրի մեկնարկային սեմինարի ընթացքում պրեզենտացիա կկատարի միջազգային փորձագետ Մարկ Չաոն, որը կհանդիպի նաև աշխատանքային խմբի հետ:

Որոշվեց

1. „Շինսերտիֆիկատ“ ՍՊԸ-ի կողմից մշակվող „Էներգաարդյունավետ շինարարական նորմերի ու կանոնների և/կամ ստանդարտների մշակման և ընդունման առկա իրավանորմատիվային և ինստիտուցիոնալ դաշտի վերլուծություն“-ը ներկայացնել աշխատանքային խմբի անդամներին նիստի հաջորդ շաբաթվա ընթացքում և այն քննարկման նպատակով հրավիրել հերթական նիստ:
2. Աշխատանքային խմբի անդամներին՝ քննարկել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2010թ. նոյեմբերի 11-ի թիվ 125 հրամանով հաստատված աշխատանքային խմբի կանոնակարգը և առաջարկությունների առկայության դեպքում ներկայացնել աշխատանքային խմբի հերթական քննարկմանը:

Աշխատանքային խմբի ղեկավար՝



Ա. Հակոբյան

Աշխատանքային խմբի քարտուղար՝



Ա. Կարապետյան